

Հողաշինարարության եւ հողօգտագործման բաժնի վարիչ Էդիկ Ստեփանյանը ճանապարհվեց վաստակած հանգստի

13.11.2017

Ղեկավարվելով ՀՀ << Քաղաքացիական ծառայության մասին>> օրենքի 33-րդ հոդվածի համապատասխան կետով՝ Գեղարքունիքի մարզպետ Կարեն Բոթոյանը նոյեմբերի 13-ին վաստակած հանգստի ճանապարհեց Գեղարքունիքի մարզպետարանի աշխատակազմի հողաշինարարության եւ հողօգտագործման բաժնի վարիչ Էդիկ Ստեփանյանին: Մարզպետ Կարեն Բոթոյանը աշխատակազմի հետ անցկացված խորհրդակցության ընթացքում շնորհակալություն հայտնեց Էդիկ Ստեփանյանին՝ պետական մարմիններում երկարամյա վաստակաշատ ու պարտաճանաչ աշխատանքի համար եւ նրան պարգևատրեց Գեղարքունիքի մարզպետի Ոսկե հուշամեդալով:

<<Էդիկ Ստեփանյանը տասնամյակներ շարունակ պետական աշխատանքում իրեն դրսևտրել է մասնագիտական ու մարդկային բարձր որակներով, աչքի ընկել ամենայն պարտաճանաչությամբ ու պատասխանատվությամբ, վայելել իր գործընկերների սերն ու հարգանքը, նրանց սիրով փոխանցել տարիների իր փորձն ու մասնագիտական գիտելիքները: Կարծում եմ, որ նա միանգամայն արժանի է այս պարգևին: Մեզ մնում է շնորհակալություն հայտնել մեր գործընկերոջը, մաղթել նրան վաստակած հանգիստ, ընտանեկան ու անձնակյան երջանկություն: Հուսամ, որ նա դեռ մարզպետարանի աշխատակազմին կաջակցի իր փորձով, գիտելիքներով ու խորհուրդներով>>,-պարգևը հանձնելուց առաջ նշեց մարզպետ Կարեն Բոթոյանը:

Շնորհակալություն հայտնելով համատեղ աշխատանքի եւ իր աշխատանքային վաստակի դիմաց տրված գնահատականի համար՝ Էդիկ Ստեփանյանը հավաստեց, որ պատրաստ կլինի ցանկացած հարցում օգնել ու օժանդակել իր գործընկերներին:

<<Շնորհակալ եմ տարիների համատեղ ու համագործակցված աշխատանքի եւ տրված գնահատականի համար: Աշխատանքում եղել են եւ հաճելի, եւ դժվարին օրեր, սակայն միասնական ջանքերով կարողացել ենք հաղթահարել բոլոր խոչընդոտները, հասնել բավարար արդյունքի: Կարծում եմ, որ այսուհետ էլ պատրաստ կլինեմ՝ իմ փորձով ու գիտելիքներով աջակցել գործընկերներին>>,-ասաց Էդիկ Ստեփանյանը:

Օգտվելով առիթից՝ մարզպետ Կարեն Բոթոյանը շնորհավորեց մարզպետարանի աշխատակազմի հողաշինարարության եւ հողօգտագործման բաժնի նորանշանակ վարիչ Մարատ Խուրշուդյանին՝ մաղթելով նրան աշխատանքային բեղուն ու արդյունավետ գործունեություն: